

Քեառսուն ազապ աղջըկ կը բերիմ արմազան,

ԶԴաւիթն էլ կսպանիմ, գլեօխ կը բերիմ:

114. Մէլքը էսաց. — Կո՛ւզ Բատին, իրաւունք տուիմ քեւ
ձեռ, մարդ ճամբելի, եօթ տարուան խարճ բի քի խամա:

Բատին ի, կըսը. — Իս կերթամ խարճն¹ էլ կը բերիմ, հալար
թալան էլ կը բերիմ:

115. Բատին ի, կըլնը խնդ խարիւր կարճ մարգիւր կը
ջիւկը, կառնը վուր տէրթայ վար Սասունայ:

Կերթայ Սասնայ կը մօտանայ, գաշտը մէջ չտարբիր կը
ղարկի. ուխտը մարգ կը ջիւկի կը ճամբելի յառէջ զխարճ բերի:
Ուխտը մարգ կառնըն ուխտ գէվա կերթան, վուր ուխտը տա-
րուան խարճը ուխտը գէվա բեռ ուսկը բերն:

116. Էդա մարգիւր կերթան մաս Յեօվան, թէ. — Մըսըրայ
Մէլքը ճամբելի, ուխտ տարուայ խարճ կուզը:

Յեօվան Դաւիթի կը վախենայ, կըսը — Դաւիթ, յէս օր
իմ սըրա ճնճղիւ մըս կուզը, գինս՛, քեանի ճնճիւղ սպանի, բի,
իս ուտիմ: Դաւիթ կը խափի, ճամբելի, վուր Դաւիթ չիմանայ.
Խարճ գեօղտուկ աայ:

117. Դաւիթ էլի կերթայ պառւել կուրկը մէջ:

Պառաւել ի, կըլնը կերթայ կուրկը արա, կը տեսնայ Դա-
ւիթ էլի կուրկը արտը մէջն ի, կըսը.

— Ա՛խ կրեօզ քի տանը Դաւիթ. ա՛խ կրեօզ քի տանը Դա-
ւիթ. գիւ վրէ՛ իմ կուրիկ սկնս կուրիս:

Կըսը. — Պառա՛ւ, վրէ՛ ըծը կրեօզ կը գնիս.

Կըսը. — Դաւիթ, էլիլն քեւ խուր խիղինէն² կը չափըն,
ուխտ տարուան խարճ կը տանին, քեառսուն խատ կարճ կնըկ
կը տանին, քեառսուն խատ էրկէն կնըկ կը տանին, քեառսուն
խատ ազապ աղջիկ կը տանին, գիւ . . . :

118. Դաւիթ էն տե, եսվաշ, դայիմ կը բունը պառւել-
ձեռ:

— Պառա՛ւ, կըսը, էրի՛, էրթանք, ըծը շանք տա՛ւ:

Պառաւ զԴաւիթ կը բերի, շանք կտայ էն յեօզէն, վուր
յերկէն կնկաիր դըռուի ին, տանը կարճ կնկաիր, աղջիաիր, շանք
կտայ: Դաւիթ, ապա, պառաւել ձեռ դայիմ բանիւր ի, չը
թուղնը: Դաւիթ իրիք յեօզի գիւռն էլ կը կուտուի, դանիւր կը
բանայ, կնկաիր, աղջիաիր կը խանի գիւս. — Իմ մէրիւր, իմ քեւ-
րիւր, մէմէկ ձի տոււն գեացէք, ըծը մէկ ջան կայ, ձի ուղուրըն³
ի, մի՛ վախենէք:

1 Թրք. — շարի, ծախր: 2 Թրք. — Գանձ, գանձատուն: 5. Թրք.

— Պատճառաւ, համար: